ՆԱԽԴԻՐՆԵՐԻ ԽՆԴԻՐՆ ԱՐԱԲԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՈՒՄ

Խադիջե Ահմադ Մեհրաբի
ԵՊՀ արաբագիտության ամբիոնի ասպիրանտ
k_ahmadmehrabi@yahoo.com

Բանալի բառեր՝ *մասնիկներ, նախդիրներ, ալ-մաջրուր թեքական ձև, սեռական հոլով:*

Նախդիրների խնդիրն արաբական լեզվաբանական ավանդույթում սերտորեն կապվում է բառերի խոսքիմասային դասակարգման հետ, քանի որ, պատկանելով «հարֆ» («մասնիկ») դասին, այն իր յուրահատուկ տեղն է զբաղեցնում այդ դասի շրջանակներում՝ իբրև «հարֆ» ընդհանուր դասի շարահյուսական գործառույթներ ունեցող ենթադաս:

Սիբավեհին հարֆը սահմանել է իբրև բառ, որն ունի նշանակություն և ո՛չ անուն է, ո՛չ բայ (حرف جاء لمعنا وليس باسم ولا فعل)[1]: Այդ սահմանումը ենթադրում է, որ հարֆը կարող է ընդգրկել թե՛ անունը, թե՛ բայը (այստեղ հարֆը հանդես է գալիս իր ընդհանուր նշանակությամբ՝ իբրև բառերի դաս), սակայն այն կազմող երեք ենթադասերից մեկը ներկայանում է այնպիսի բառերով, որոնք ոչ՛ անուններ են, ո՛չ էլ բայեր: Վերջիններս կառուցված են լինում որոշակիորեն կարգավորված մոդելներով, որոնք այս կամ այն նշանակությունն են արտահայտում, իսկ հարֆերը որևէ կարգավորված կառուցվածք չունեն և առանձնանում են իմաստային լայն բազմազանությամբ[2]: Այդ բազմազանության մեջ

[1] سيبويه، الكتاب 1: 12.

[2] Karabekyan Samvel and Yavrumyan Marat. Ḥarf. Encyclopedia of Arabic Language and Linguistics. 2006. Vol. 2, p. 237.

առանձնանում են այն հարֆերը, որոնք ունեն շարահյուսական գործառույթ. մասնիկներ, որոնք կարգավորում են շարահյուսական հարաբերությունները նախադասության մեջ և պայմանավորում հաջորդող անվանական բառին հատուկ الجرّ (≈«սեռական հոլով») թեքական նշանակությունը: Չնայած իմաստային և ֆունկցիոնալ տարատեսակությանը, հենց այդ հիմնորոշ հատկությունն է, որ միավորում է դրանց ամփոփ մի ենթադասի մեջ և տալիս նրանց ընդհանուր անվանում՝ حروف الجرّ, իսկ հաջորդող բառերի հետ նրանց կապակցությունները՝ جارّ ومجرور:[3]

حرف الجر կարգի մասնիկների գործառական նշանակությունը պայմանավորված է շարահյուսական վերլուծության մի շարք ասպեկտներով: Այդ առումով հնարավոր է դրանց դիտարկումը թե՛ անուղղակի խնդիր պարունակող (օր.՝ ذهب إلى الجامعةِ - Նա համալսարան գնաց), թե՛ պարագայական նախադասություններում (օր. هو في الجامعة - Նա համալսարանում է), քանի որ դրանցից յուրաքանչյուրում այդ լեզվական միավորների հատկություններն արտահայտվում են տարբեր տեսքով:

Առաջին կարգի կապակցություններում المجرور անդամի իմաստը որոշակիորեն կախված է նախորդող բայի իմաստից (հմմտ.՝ ذهب ← إلى...), իսկ երկրորդ դեպքում պարագայական նշանակությամբ մասնիկով կապակցությունը համեմատաբար անկախ է ստորոգական հանգույցից (հմմտ.՝ هو × في الجامعة):

Ստորև ներկայացվում են حروف الجرّ կարգի մասնիկների դասակարգման սկզբունքներն ըստ արաբ և օտար լեզվաբանների:

Նախ անդրադառնանք դասակարգման այն չափանիշներին, որոնք կիրառվում են արաբական լեզվաբանական ավանդույթում حروف الجرّ կարգի մասնիկների դասակարգման համար:

[3] أحمد فليح ، حروف الجر و معانيها ، ص 15 - 16

Բոլոր տեսակի մասնիկների առավել ընդհանուր հատկանիշն է դրանց անփոփոխությունը նախադասության մեջ զբաղեցրած դիրքի համեմատ, քանի որ դրանք բոլորը պատկանում են այսպես կոչված المبني (չթեքվող) բառերի շարքին: Արաբական քերականական ավանդույթի դասակարգման սկզբունքները ներառում են, ինչպես արդեն նշվել է, հաջորդող՝ թեքվող բառի բառափոխական նշանակությունը կառավարելու հիմնորոշ չափանիշը (العمل): Ըստ այդ չափանիշի, մասնիկները դասակարգվում են համաձայն այն թեքական ազդեցության, որ ունենում են կառավարվող բառի վրա: Այդ առումով տարբերում են. (ա) մասնիկներ, որոնք պայմանավորում են հաջորդող բառի (լինի դա անվանական, թե բայական) խնդրառական բառաձև (այսինքն՝ այն ձևը, որը մատնանշում է նախադասության անդամների շղթայում դրանց խնդրային գործառույթը), (բ) մասնիկներ, որոնք պայմանավորում են հաջորդող բառի (միայն բայական) հատյալ բառաձև (այսինքն՝ այն ձևը, որը մատնանշում է վերջիններիս կախվածությունը միայն նախորդող մասնիկից, առանց նախադասության կազմում գործառույթ ունենալու և (գ) մասնիկներ, որոնք պայմանավորում են հաջորդող բառի (միայն անվանական) բեկված բառաձևը, որը նույնպես կախում ունի միայն նախողդող մասնիկից: Այս վերջիններն էլ միավորվում են նախդիրների խմբում:

Կան նաև մասնիկներ, որոնք որևէ ազդեցություն չեն գործում հաջորդող բառի վրա (որը հանդես է գալիս իր ուղիղ ձևով)՝ որոշ դեպքերում վերաբերելով հաջորդող բառին կամ ամբողջ նախադասությանը և հաղորդելով նրան ընդհանուր նշանակություն՝ հարցական, ժխտական և այլն: Այս դասակարգումն արդեն կապված է մասնիկների, այսպես կոչված, «գործիքային» գործառույթի հետ, և ըստ այդմ տարբերում են,

օրինակ, հարցական մասնիկներ (حروف الاستفهام), կոչական մասնիկներ (حروف النداء), երդման մասնիկներ (حروف القسم) և այլն:[4]

Արաբագիտական գրականության մեջ մասնիկների այդ երրորդ խումբը որոշակիորեն ընկալվում է որպես հնդեվրոպական լեզուների նախդիրներին համարժեք դաս, սակայն ամբողջովին չի համընկնում վերջինիս: Այսպես, դրանցից ամենատարածվածները՝ على ب, في, إلى, من և այլք, լիովին համապատասխանում են նման սահմանմանը թե՛ իմաստաբանորեն, թե՛ շարահյուսական գործառույթի առումով: Միևնույն ժամանակ, այդ դասի մի շարք տարածված մասնիկներ, ինչպես, օրինակ, و, ربّ, որպես այդպիսիք գնահատվել չեն կարող, մինչդեռ արաբ քերականագետներն այդ ամբողջ դասը դիտարկել են համասեռ կառավարման, ինչպես նաև շարահյուսական գործառույթների տեսանկյունից: Այսպես, դեռևս Սիբավեյհին حروف الجر դասի բոլոր մասնիկները կապում էր այսպես կոչված إضافة-ի՝ շարահյուսական յուրահատուկ կառույցի հետ, որի հիմքում նույնպես الجرّ բառափոխական կարգն է[5]:

Նկատի ունենալով արաբական քերականագիտության հատուկ մեթոդը, երբ լեզվական երևույթները գնահատվում են դրանց վերագրվող հատկանիշների դրսևորման լիակատարության տեսանկյունից՝ դասակարգվելով իբրև «հիմնական» (أصل) և «ճյուղային» (فرع), حروف الجرّ դասի մասնիկների համակարգի հիմնական միջուկը համարվում են հենց այն մասնիկները, որոնք կատարում են նախդիրների գործառույթ, ուստի ամբողջ դասի հատկանիշները սահմանվում են հենց այդ խմբի հատկանիշների հիման վրա, իսկ մնացյալ մասնիկները կազմում են համակարգի «ճյուղավորումներ», որոնք

[4] Carter M.G. Sībawayhi. Oxford: University Press, 2004, p. 88.

[5] Massignon L. Réflexions sur la structure primitive de l'analyse grammaticale en arabe. – Arabica. T. 1, 1954.

բնութագրվում են հիմնական հատկանիշներից այս կամ այն գործառական շեղումներով։

Մասնիկներն, ի տարբերություն անունների և բայերի, չունեն սեփական ներքին իմաստ, այլ միտված են դեպի այլ՝ սեփական իմաստ արտահայտող բառեր՝ վերջիններիս հաղորդելով նախադասության ընդհանուր իմաստով պայմանավորված կառուցվածքային ձև։ Հետևապես, մասնիկները չեն կարող խոսքում գործել ինքնուրույնաբար, այլ կարիք ունեն հաջորդող անվանական ձևերի, որոնցում էլ դրանք կարող են բացահայտել իրենց նշանակությունը։

Ստորև դիտարկենք մասնիկների հիմնական գործառույթները նախադասության կազմում՝ իմաստային և շարահյուսական տեսանկյունից։ Իմաստային տեսանկյունից դրանք կապակցող դեր են կատարում նախադասության իմաստային հիմնական տարրերի միջև (դրանց սղման արդյունքում խեղվում է նախադասության իմաստը)։ Շարահյուսական տեսանկյունից դրանց հիմնական գործառույթը միջդիրքային կապերն ապահովելն է, քանի որ պատկանելով չթեքվող խոսքի մասի՝ նրանք չեն կարող ինքնուրույն շարահյուսական դիրք զբաղեցնել։

Մասնիկները սովորաբար բաժանվում են երեք մասի՝ ըստ գործածման առանձնահատկության, ըստ գործառույթի առաջնային կամ երկրորդական լինելու և ըստ կախյալ բառի։

Ըստ գործածման առանձնահատկության, մասնիկները բաժանվում են երեք խմբի[6].

1. Մասնիկներ, որոնք օգտագործվում են միայն գոյականական անվան հետ՝ ربّ (գուցե), كـ (նման), երդման و, كي (որպեսզի), منذ (منذ) (ի վեր) և այլն։ Օրինակ՝ رب رجل شريف لقيته (միգուցե մի պատվարժան մարդու էի

[6] عاطف فضل ، النحو الوظيفي ، ص 186 - 187

հանդիպել), ما رأيته مذ يوم الجمعة (Նրան չեմ տեսել ուրբաթ օրվանից ի վեր)։ Իբն Մալիքն իր «Ալֆիյյա»–ում ասել է. «Որպես գոյականի հետ օգտագործվող են բնութագրվում ربّ – միգուցե, ت–ն, و–ը, الكاف – նման, مذ, منذ – ի վեր, حتى – մինչև»։

2. Մասնիկներ, որոնք օգտագործվում են միայն դերանունների հետ՝ لولا – եթե չլիներ։ Օրինակ لو لاكَ لنسيت حقيبتي (եթե դու չլինեիր, ես պայուսակս կմոռանայի)։ Սակայն, որոշ քերականներ, ինչպես Ալ–Ախֆաշը, այն հարակցական մասնիկ չեն համարում, այլ ասում են, որ այս կապակցության մեջ դերանունը ենթակայի ինքնառական դիրքում է և հարակցական թեքմամբ դերանունը դրվել է ինքնառական թեքմամբ դերանվան դիրքում։
3. Մասնիկներ, որոնք օգտագործվում են թե՛ գոյականի, և թե՛ դերանվան հետ, օրինակ من – ից, إلى – դեպի, عن–մասին, على – վրա, في – մեջ, ل – համար, حاشا ، خلا ، عدا – բացի։ اخذت من زيد قلما ثم اخذت منک قلما آخر (Զեյդից մի գրիչ վերցրեցի, հետո մեկ այլ գրիչ վերցրեցի քեզանից)։

Ըստ գործառույթի առաջնային կամ երկրորդական լինելու մասնիկները նույնպես բաժանվում են երեք խմբի՝

1. Այն մասնիկները, որոնք նախադասության մեջ նոր իմաստի են հանգեցնում և իրար են կապում կառավարող բառը և հարակցված անունը։ Դրանք անպայման կախյալ բառ ունեն և ներկայացված են հետևյալ շարքով. من – –ից, إلى – դեպի, عن – մասին, على – վրա, حتى – մինչև, مذ, منذ – ի վեր, كي – որպեսզի, ل – համար, و, ت – երդման մասնիկ, ك – նման։
2. Մասնիկներ, որոնք չունեն կախյալ բառ և չեն ազդում իմաստի վրա, այլ միայն ուժեղացնում են

նախադասության իմաստը։ Դրանց հաջորդող անունն արտասանությամբ դրվում է հարակցական բառափոխական դիրքով, սակայն զբաղեցրած դիրքով այն ինքնառական է։ ներկայացված են հետևյալ շարքում. من – –ից, ب – –ով, ك – նման, օրինակ. ما جائنى من احد – ինձ մոտ չեկավ ոչ ոք (ոչ ոքից), ليس زيد بقائم – Զեյդը կանգնած չէ։

3. Մասնիկներ, որոնք հանգեցնում են նախադասության նոր իմաստի, սակայն չունեն կախյալ բառ, օրինակ ربّ ավելորդանման հարակցական մասնիկը, որին հաջորդող հարակցական անունը վերլուծվում է որպես հարակցական բառափոխական դիրքով դրված անուն, օրինակ. رب صديق أوفى من الأخ – միգուցե ընկերն ավելի նվիրված է, քան եղբայրը, صديق – ընկեր բառն այստեղ արտասանությամբ հարակցական բառափոխական դիրքով դրված անվանական ենթակա է, սակայն զբաղեցրած դիրքով այն ինքնառական է։

Ըստ կախյալ բառի, մասնիկները բաժանվում են չորս տեսակի՝

1. Եթե կախյալություն առաջացնող բառը նախադասության մեջ նշված բայն է, օրինակ՝ ذهبَ عليٌّ إلى المدرسةِ – Ալին գնաց [դեպի] դպրոց (հարակցական մասնիկն ու նրան հարակցված անունը կախված են «գնալ» բայից)
2. Եթե կախյալություն առաջացնող բառը բայից ածանցված անուն է, օրինակ, عليٌّ واقف في الصف – Ալին կանգնած է շարքում (այն կախված է واقف – «կանգնած»–ից), կամ բայանուն, օրինակ՝ التَّدْخينُ في الحافلةِ ممنوعٌ – Ծխելն ավտոբուսում արգելված է (կախված է التَّدْخين – «ծխելը» բառից),

3. Եթե կախյալություն առաջացնող բառը խոսքում ոչ թե հիշատակվում է, այլ ենթադրվում, օրինակ՝ عليٌّ في المدرسة – Ալին դպրոցում է (կախված է «առկա է»–ից), այս պարտադրաբար զեղչված բացարձակ գոյությունը, ինչպես և նախորդ նախադասության մեջ, անվանական նախադասության ստորոգյալն է, կամ որոշիչը, օրինակ՝ هذه رسالة منک – Սա նամակ է քեզանից, կամ վիճակի պարագա, օրինակ՝ خرج زيد فى زينته – Զեյդը դուրս եկավ իր պերճանքով, կամ կապ, օրինակ՝ لله ما فى السموات وما فى الارض – Աստված այն է, ինչ երկնքում է և երկրում:

Ամփոփելով կարելի է նշել, որ թեպետ մասնիկների հիմնական մասն իր գործառույթներով հիմնականում համապատասխանում է նախդիրներին, ինչի հետևանքով այդ երկու լեզվական դասերը հաճախ պարզապես նույնացվում են ոչ արաբական գիտական գրականության մեջ, սակայն մասնիկների դասակարգման առանձնահատկություններն արաբական լեզվաբանական ավանդույթում ցույց են տալիս նախդրավոր մասնիկների դասակարգման գործառական չափանիշների ավելի լայն բազմազանություն:

ՆԱԽԴԻՐՆԵՐԻ ԽՆԴԻՐՆ ԱՐԱԲԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՈՒՄ

Ամփոփում

Խադիջե Ահմադ Մեհրաբի
k_ahmadmehrabi@yahoo.com

Բանալի բառեր՝ *մասնիկներ, նախդիրներ, ալ-մաջրուր թեքական ձև, սեռական հոլով*

Մասնիկների հիմնական մասն արաբերենում իր գործառույթներով հիմնականում համապատասխանում է նախդիրներին, ինչի հետևանքով այդ երկու լեզվական դասերը հաճախ պարզապես նույնացվում են արաբագիտական գրականության մեջ։ Միևնույն ժամանակ, մասնիկների դասակարգման առանձնահատկությունները արաբական լեզվաբանական ավանդույթում ցույց են տալիս վերջիններիս համակարգման հիմքում ընկած գործառական չափանիշների ավելի լայն բազմազանություն։

THE PROBLEM OF PREPOSITIONS IN ARABIC LINGUISTIC TRADITION

Summary

Khadije Ahmad Mehrabi
k_ahmadmehrabi@yahoo.com

Keywords*: particles, prepositions, al-majrur, genitive case.*

The main part of the particles in Arabic functionally corresponds to prepositions, thus they are often considered as equal in the non-Arabic linguistic tradition. At the same time, peculiarities of classification of

particles in Arabic linguistic tradition show greater variety of functional criteria of their classification.

ПРОБЛЕМА ПРЕДЛОГОВ В АРАБСКОЙ ЛИНГВИСТИЧЕСКОЙ ТРАДИЦИИ

Резюме

Хадидже Ахмад Мехраби
k_ahmadmehrabi@yahoo.com

Ключевые слова: *частицы, предлоги, флективная форма аль-маджрур, родительный падеж.*

Основная часть единиц класса частиц в арабском языке функционально соответствует предлогам, вследствие чего эти два языковых класса зачастую отождествляются в арабистической литературе. В то же время, особенности классификации частиц в арабской лингвистической традиции показывают большее разнообразие функциональных критериев, лежащих в основе их классификации.